

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԻԶԵՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ Հ Ա Ր Ց Ը Ո Ր Ո Շ Ե Լ ՈՒ Վ Ե Ր Ա Բ Ե Ր Ց Ա Լ Գ Ո Ր Ծ Ո Վ

Քաղ. Երևան

4 մայիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 40 և 74-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի հունվարի 16-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի միջև՝ Հայաստանի Հանրապետությունում Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հայաստանյան տարածաշրջանային բաժանմունքի տեղակայման պայմանների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2018 թվականի ապրիլի 3-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի միջև՝ Հայաստանի Հանրապետությունում Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հայաստանյան տարածաշրջանային բաժանմունքի տեղակայման պայմանների մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018թ. հունվարի 16-ին Երևանում:

2. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի միջև Հայաստանի Հանրապետությունում Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հայկական տարածաշրջանային բաժանմունքի տեղակայման պայմանների մասին» նախորդ համաձայնագիրը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի 12.10.1998թ. Ն-296-1 որոշմամբ (ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչվել 06.10.1998թ. ՍԴՈ-127 որոշմամբ): Քննության առարկա Համաձայնագիրը կոչված է փոխարինելու նշված համաձայնագիրը և ներառում է որոշակի լրամշակումներ և փոփոխություններ, որոնք հիմնականում տեխնիկական բնույթի են:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, նախ ստանձնում է ֆինանսական պարտավորություններ, որոնք են.

- Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հայաստանյան տարածաշրջանային բաժանմունքի (այսուհետ՝ ՄԳՏԿ ՀՏԲ) գործունեության համար ծախսերի մի մասը կատարել պետական բյուջեի՝ գիտությանը հատկացվող միջոցներից (հոդված 2, կետ 2. 1.),

- ՄԳՏԿ ՀՏԲ-ին հատկացնել գրասենյակային տարածք և տրամադրել համապատասխան նյութատեխնիկական աջակցություն (հոդված 2, կետ 2.2.),

- Կառավարության միջոցներով (Համաձայնագրի 2.1. հոդվածում նշված ֆինանսական հատկացումներից) ապահովել ՄԳՏԿ-ի կողմից գնված փոխադրամիջոցի շահագործումը (հոդված 2, կետ 2.3.):

Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է նաև.

- ապահովել Հայաստանի քաղաքացիների՝ ՄԳՏԿ ՀՏԲ աշխատակազմի անդամների աշխատանքի ժամանակին վարձատրությունը (հոդված 3, կետ 3.1.),

- ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի միջոցով իրականացնել վերահսկողություն Համաձայնագրի կատարման նկատմամբ (հոդված 6):

4. Համաձայնագիրն էապես չի շոշափում Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքները և դրանով ստանձնած պարտավորությունները չեն հակասում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Ավելին, Համաձայնագիրը կոչված է Հայաստանի Հանրապետության գիտնականներին և ինժեներներին լայնորեն ընդգրկելու ՄԳՏԿ գործունեության շրջանակներում իրականացվող նախագծերի կազմման և իրականացման գործում, ինչը կարող է նպաստել Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում ամրագրված հիմնարար և կիրառական գիտության զարգացման նպատակի իրագործմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 63, 64-րդ հոդվածներով և 74-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը
Ո Ր Ո Շ Ե Ց.

1. 2018 թվականի հունվարի 16-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի միջև՝ Հայաստանի Հանրապետությունում Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հայաստանյան տարածաշրջանային բաժանմունքի տեղակայման պայմանների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ.ԹՈՎՄԱՍՅԱՆ

4 մայիսի 2018 թվականի
ՄԴՈ-1414